

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/3

25 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Կոմսալ» ՍՊԸ 28.10.2014 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի 29.08.2014 թ-ի թիվ 782 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետը, քննարկելով «Կոմսալ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) վերաբերյալ վարչական վարույթի նյութերը, 29.08.2014 թ-ին ընդունել է թիվ 782 որոշումը՝ ընկերությունից 24.232.190 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի 29.08.2014 թ-ի թիվ 782 որոշումն ընդունելու համար հիմք է հանդիսացել ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 1009650 ստուգման ակտով առաջադրված պարտավորություններն ընկերության կողմից սահմանված ժամկետում չվճարելու հանգամանքը:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «Կոմսալ» ՍՊԸ կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 1009650 ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 04.09.2014 թ-ի թիվ ՎԴ/4568/05/14 որոշման համաձայն ընկերության հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի 29.08.2014 թ-ի թիվ 782 որոշման ընդունման համար հիմք հանդիսացող ապացույցը՝ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 1009650 ստուգման ակտը, վիճարկվում է դատական կարգով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև վարչական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության վարչական բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Կոմսալ» ՍՊԸ 28.10.2014 թ-ի վարչական բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**